ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲ ՎԱՍԱԿԻ ԹԱՐՓՈՇՅԱՆ

ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Մարկոսյան Աշոտ Խաչատուրի**
Պաշտպանության ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Մելքումյան Միքայել Սերգեյի** տնտեսագիտության թեկնածու **Բարխուդարյան Գոհար Արայի**
Առաջատար կազմակերպություն՝	**Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է՝ 2022թ. հուլիսի 8-ին, ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան 52:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2022թ.մայիսի 23-ին:

Տնտեսագիտության թիվ 015
մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տ.գ.թ., դոցենտ՝ Ա.Հ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժողովրդագրական իրավիճակի, տնտեսության համակարգային ցնցումների և սահմանափակ միջոցներով հասարակության կարիքների բավարարման համատեքստում, ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը դարձել է հրամայական տնտեսավարող սուբյեկտների որոշումների կայացման և տնտեսության զարգացումների համար: Ռեսուրսների սահմանափակ լինելը ստիպում է միջոցներն օգտագործել հնարավորինս արդյունավետ, իսկ որը հնարավոր է դառնում նոր և առավել արգասավոր մոտեցումների բացահայտման՝ նորարարության միջոցով: Ըստ այդմ, գլոբալացման ներկա պայմաններում, նորարարական գործունեությունը կարելի է համարել հասարակության կենսամակարդակի բարելավման հիմնական շարժիչ ուժը:

Նորարարությունը, որը հաճախ մշակվում և մեծամասամբ իրականացվում է կազմակերպությունների (այսուհետ՝ ձեռնարկությունների) կողմից, անհրաժեշտ է ոչ միայն նոր հնարավորությունների բացահայտման, արտադրողականության ավելացման և զբաղվածության ապահովման համար, այլև նպատակ ունի լուծելու հասարակության առաջ ծառացած մարտահրավերները, ինչպիսիք են՝ կայուն զարգացման՝ այդ թվում սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրները: Հայաստանի Հանրապետության պարագայում այս ամենին ավելանում են նաև արցախյան հիմնախնդիրը, աշխարհաքաղաքական անորոշությունը և ժողովրդագրական իրավիճակը, որոնց պայմաններում տնտեսության և տնտեսական կառուցակարգերի արդյունավետության բարձրացումը դարձել է պետականության կայունության և անկախության գրավականը: Ռիսկերը կանխարգելելու և լուծումներ գտնելու համատեքստում, ձեռնարկությունների առավել արդյունավետ և առաջ մղող առանձին խմբի՝ նորարարական ձեռնարկությունների առկա վիճակի ու ներուժի համապարփակ ուսումնասիրությունը, ինչպես նաև նորարարական ձեռնարկատիրության և ֆորմալ ու ոչ ֆորմալ ինստիտուտների միջև կապերի ուսումնասիրության հիման վրա ոլորտի զարգացման կառուցակարգերի մշակումը կնպաստի նշված հիմնախնդիրների համակարգային լուծմանը:

Թվարկված հիմնահարցերի հետազոտման անհրաժեշտությունը պայմանավորել է ատենախոսության թեմայի ընտրությունը ու հետազոտման շրջանակը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածը, նպատակները և խնդիրները:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ինստիտուտների ազդեցությունը նորարարական ձեռնարկատիրության վրա և դրա միջոցով բացահայտել Հայաստանի Հանրապետությունում նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ

միջավայրի բարելավման ուղիները: Այս նպատակին հասնելու համար հետազոտության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

- հետազոտել ձեռնարկատիրությանը և նորարարական ձեռնարկատիրությանը առնչվող տեսագիտական հիմքերը՝ դրանց վերաբերյալ տեսակետների դասակարգման և համադրման միջոցով,
- սահմանել ձեռնարկատիրություն, նորարարություն և նորարարական ձեռնարկատիրություն հասկացությունները գիտական և գործնական նյութերի ուսումնասիրության միջոցով,
- քննարկել ինստիտուտների և նորարարական ձեռնարկատիրության միջև կապերի վերաբերյալ ուսումնասիրությունները,
- հետազոտել ինստիտուտների ազդեցությունը նորարարական ձեռնարկատիրության վրա՝ տնտեսաչափական մոդելավորման միջոցով,
- բացահայտել Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական ինստիտուտի ձևավորման հիմքերը և հայաստանյան նորարարական ձեռնարկատիրության առանձնահատկություններն ու խնդիրները,
- գնահատել Հայաստանի Հանրապետությունում ինստիտուցիոնալ միջավայրի առկա խնդիրները՝ միջազգային ցուցիչների միջոցով համադրելի երկրների հետ համեմատական վերլուծության շնորհիվ,
- բացահայտել Հայաստանի Հանրապետությունում նորարարության և նորարարական ձեռնարկատիրության զարգացման ինստիտուցիոնալ խոչընդոտները և դրանց չեզոքացմանն ուղղված առաջնահերթությունները՝ փորձագիտական հարցման միջոցով:

Ուսումնասիրության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան տնտեսություններում նորարարական ձեռնարկատիրության վրա ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների ազդեցությունն է, իսկ հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ միջավայրն է:

Ատենախոսության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայ հեղինակների գիտական աշխատությունները, ինչպես նաև միջազգային հեղինակավոր կառույցների զեկույցներն ու այլ հրապարակումները:

Տեղեկատվական հիմք են հանդիսացել միջազգային կազմակերպությունների (Համաշխարհային բանկի, Ձեռնարկատիրության համաշխարհային մոնիթորի, Համաշխարհային տնտեսական ֆորումի և այլն) կողմից պարբերաբար հրապարակվող վիճակագրական տվյալների բազաները, ՀՀ վիճակագրական կոմիտեի և այլ պետական կառույցների կողմից հրապարակվող պաշտոնական տվյալները, ինչպես նաև ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության

որոշումները, ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերը, գիտակրթական հիմնադրամների հրապարակած տեղեկատվությունը և այլ հրապարակումները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային մոտեցման և համեմատական վերլուծության, տնտեսաչափական և մաթեմատիկական մոդելավորման, գրաֆիկական վերլուծության, մակածության և մտահանգման մեթոդները: Հետազոտության շրջանակներում փորձագիտական գնահատման մեթոդի հիման վրա իրականացվել է ոլորտի կարիքների գնահատման փորձագիտական հետազոտություն:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների ընթացքում ստացված տեսամեթոդական և կիրառական հիմնական արդյունքները ներկայացած են ստորև.

- Հաշվի առնելով տարբեր նպատակներով նորարարություն, ձեռնարկատիրություն, ձեռնարկություն, կազմակերպություն և նորարարական ձեռնարկատիրություն եզրույթների կիրառման ընթացքում միասնական ընկալման անհրաժեշտությունը՝ տրվել են դրանց սահմանումներ՝ հիմնված գրականության և օրենսդրական դաշտի ուսումնասիրության վրա:
- Նորարարությունը, նորարարական ձեռնարկատիրությունը ինստիտուցիոնալ միջավայրը բնութագրող տվյալների շարքերի, օրենսդրական դաշտի և պատմական փաստերի վերլուծության և համադրության միջոցով գնահատվել է Հայաստանում նորարարական ձեռնարկատիրության զարգացման հիմքերը և միտումները, ինչպես նաև բացահայտվել են առավել խոցելի խնդիրներն ու դրանց պատճառները:
- Պանելային ռեգրեսիոն երեք տնտեսաչափական մոդելների միջոցով ստուգվել են իրականացված հետազոտության հիման վրա առաջադրված չորս հիպոթեզները, ինչի շնորհիվ բացահայտվել են նորարարական ձեռնարկատիրության վրա ինստիտուտների ազդեցությունը, ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների ազդեցության առանձնահատկությունները, զարգացող և զարգացած երկրներում ազդեցության առանձնահատկությունները, ինչպես նաև նորարարական ձեռնարկատիրության և ինստիտուտների միջև հակադարձ կապը:
- Պետական կառույցների ներկայացուցիչների, գիտակրթական հաստատությունների, ձեռնարկությունների և դրանց աջակցող կառույցների ներկայացուցիչ փորձագետների շրջանում իրականացված փորձագիտական հարցման արդյունքում ուսումնասիրվել են նորարարության և նորարարական ձեռնարկատիրության զարգացման ինստիտուցիոնալ

խնդիրները և սահմանվել են դրանց լուծմանն ուղղված առաջնահերթությունները: Տվյալների վավերականությունը հաստատվել է Քրոնբախի ալֆա գործակցի միջոցով:

- Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների, այդ թվում՝ գիտական գրականության ամփոփման, քանակական վերլուծության, պանելային ռեգրեսիոն մոդելների և փորձագիտական հարցման արդյունքների հիման վրա մշակվել է Հայաստանի Հանրապետությունում նորարարական ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ինստիտուցիոնալ միջավայրի բարելավման առաջարկությունների և դրանց իրականացման որոշ միջոցառումների փաթեթ:

Աշխատանքի կիրառումը և գիտագործնական նշանակությունը: Պետության կողմից բազմիցս ընդգծվել է ձեռնարկատիրության և նորարարության առաջնահերթությունը: Ըստ այդմ սույն ատենախոսության շրջանակներում իրականացված համալիր գիտական հետազոտությունը, մեթոդական, գիտական և գործնական արդյունքները և մշակված առաջարկությունները կարող են աջակցել նախ և առաջ հենց պատասխանատու օրենսդիր և գործադիր գերատեսչություններին ու մարմիններին՝ տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ:

Մյուս կողմից, ստացված արդյունքները կարող են արժեք ստեղծել նաև մի շարք այլ խմբերի, ինչպես օրինակ՝ ձեռնարկատերերի, բիզնեսին աջակցող կառույցների, միությունների և գիտական ընկերությունների համար՝ ստացված արդյունքների միջոցով նորարարական ձեռնարկատիրության բնույթի ուսումնասիրության, կարիքների բացահայտման և խնդիրների լուծման համատեքստում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Կառավարման» ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտահայտված են հեղինակի հրատարակած 7 և հեղինակի համահեղինակությամբ հրատարակված 1 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, 158 անուն օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալն առանց հավելվածների կազմում է 161 էջ: Ատենախոսությունն ընդգրկում է 10 աղյուսակ, 49 գծապատկեր և 7 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է աշխատանքի թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, առանձնացվել են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տրվել են աշխատանքի տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են ատենախոսության գիտական նորույթը, հիմնական արդյունքները և գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Նորարարական ձեռնարկատիրության արդի հիմնահարցերը**» գլխում քննարկվել է ձեռնարկատիրության և նորարարական ձեռնարկատիրության կարևորությունը շուկայական տնտեսության համատեքստում, ուսումնասիրվել են դրանց գիտական, ինչպես նաև գործնական տարբեր նպատակներով սահմանումները և դասակարգումները: Վերլուծվել են ինստիտուցիոնալ տնտեսագիտության և նորարարության վերաբերյալ առաջատար տնտեսագետների տեսակետները (Ա.Սմիթ, Դ.Նորթ, Օ.Ուիլիամսոն, Դ.Աճեմօղլու, Վ.Բումոլ, Պ.Դրաքեր և այլն), դրանց հիման վրա ներկայացնել է ինստիտուտների դերը տնտեսության և մասնավորապես՝ ձեռնարկատիրության և նորարարության զարգացման գործում:

Այսպես, ժամանակակից տնտեսությունը բարդ և բազմագործոն համակարգ է, որի հիմնական գործառույթը վաղուց չի սահմանափակվում միայն մարդկանց և տնտեսության մյուս սուբյեկտների միջև ռեսուրսների բաշխմամբ: Սահմանափակ ռեսուրսների միջոցով հասարակության կարիքների բավարարման համատեքստում, ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը դարձել է հրամայական տնտեսության սուբյեկտների որոշումների կայացման և տնտեսության միտումների համար:

Ռեսուրսների սահմանափակ լինելը ստիպում է առկա միջոցներն օգտագործել հնարավորինս արդյունավետ, իսկ դա հնարավոր է դառնում նոր և առավել արգասավոր մոտեցումների բացահայտման՝ նորարարության միջոցով: Ըստ այդմ, գլոբալացման ներկա պայմաններում նորարարական գործունեությունը կարելի է համարել հասարակությունների կենսամակարդակի բարելավման հիմնական շարժիչ ուժը: Նորարարության մասին Շումպետերը հայտնի է «ստեղծագործական ոչնչացում» (անգլերեն՝ “creative destruction”) գաղափարով, համաձայն որի, ներկայացնելով նոր արտադրանք կամ տեխնոլոգիական նորարարություն, ձեռնարկատերերը խախտում են շուկայի հավասարակշռությունը, դուրս մղելով ցածր աշխատանքի արտադրողականություն ունեցող ձեռնարկություններին, ինչը իր

հերթին ստեղծում է ավելի մրցակցային միջավայր և նպաստում է շուկայի աշխատանքի միջին արտադրողականության բարձրացմանն ու տնտեսական աճին[1]:

Նորարարությունը, որը հաճախ մշակվում և մեծամասամբ իրականացվում է ձեռնարկությունների կողմից, անհրաժեշտ է ոչ միայն նոր հնարավորությունների բացահայտման, աշխատանքի արտադրողականության ավելացման և զբաղվածության ապահովման համար, այլև նպատակ ունի լուծելու հասարակության առաջ ծառացած ու ծառացող մարտահրավերները:

Այս առումով, մի շարք տնտեսագետներ տարբերակում են ձեռնարկատիրության երկու հիմնական տեսակ՝ «սովորական» (կամ «իմիտացիոն») և «նորարարական»[2]: Առաջինի դեպքում հասարակության համար հիմնական ավելացված արժեքը աշխատատեղերի ստեղծումն է, մինչդեռ նորարարական ձեռնարկատիրությունը նպաստում է աշխատանքի արտադրողականության և ավելացված արժեքի ավելացմանը, հարստության ստեղծմանը[3]:

Ատենախոսության շրջանակներում մշակված կոռելացիոն մոդելները ցույց են տալիս, որ ինչքան բարձր է նորարարական ձեռնարկության մակարդակը երկրում, այնքան ավելի հավանական են իրական բարձր եկամուտները և դրանց հավասար բաշխումը (ի տարբերություն իմիտացիոն ձեռնարկատիրության, որի դեպքում կապը բացակայում է):

Նորարարության ձեռնարկատիրության զարգացման և դրա միջոցով տնտեսական հավելաճ ապահովելու քայլերի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նորարարությունը և նորարարական ձեռնարկատիրությունը խթանող տնտեսական միջավայրի՝ ինստիտուցիոնալ համակարգի առկայությամբ: Վերջիններս մարդկանց կողմից չկանխամտածված կամ դիտավորյալ կերպով մշակված սահմանափակումներն են կամ ինչպես պնդում էր Դ. Նորթը՝ «խաղի կանոններն» են, որոնք ստեղծում են գործարքի որոշակի ծախսեր, դրանք իրենց հերթին կարող են հեշտացնել տնտեսական զարգացումը կամ ընդհակառակը՝ դանդաղեցնել այն[4]:

Փաստորեն, եթե տնտեսության մեջ գործող ինստիտուտներն այնպիսին են, որ ձեռնարկության համար՝ իր նպատակներն իրականացնելու ճանապարհին առավել հեշտ է շրջանցել նորարարությունը, քան դրա միջոցով հասնել նպատակներին, ապա

---

[1] Schumpeter J., "The Theory of Economic Development", MA: Harvard University Press, Cambridge, 1934

[2] Dahlstrand L. and Stevenson L., "Innovative Entrepreneurship Policy: Linking Innovation and Entrepreneurship in a European", Annals of Innovation & Entrepreneurship, Bucharest, 2010, vol. 1(10), pp. 5612

Snijders J., Laag A., "Innovative entrepreneurship: A Dutch policy perspective in Entrepreneurship in the Netherlands: Innovative entrepreneurship. New policy challenges", EIM Business & Policy Research, Zoetermeer , 2002, pp. 35-36

[3] Dahlstrand L. and Stevenson L., "Innovative Entrepreneurship Policy: Linking Innovation and Entrepreneurship in a European", Annals of Innovation & Entrepreneurship, Bucharest, 2010, vol. 1(10), pp. 5614

[4] North D., "Institutions, institutional change and economic performance", Cambridge University Press, Cambridge, 1990, pp. 3, 36

ձեռնարկատերը կշրջանցի նորարարությունը: Ուստի, պետական քաղաքականության նպատակը պետք է լինի ստեղծել ինստիտուցիոնալ այնպիսի պայմաններ, որտեղ ձեռնարկությունները ցանկանան և լինեն նորարար, այդպիսով երկարաժամկետում նպաստելով տնտեսության տարբեր ոլորտներում աշխատանքի արտադրողականության աճին և ավելացված արժեքի բարձր մակարդակին՝ վերջնարդյունքում խթանելով կենսամակարդակի դրական փոփոխությանը:

Ատենախոսության երկրորդ՝ «**Ձեռնարկատիրության և նորարարական գործունեության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում**» գլխում քննարկվել են ՀՀ-ում ձեռնարկատիրության առանձնահատկությունները և ձևավորման հիմքերը անկախության հռչակման և դրան հաջորդած ժամանակահատվածում, քննարկվել է ձեռնարկատիրության և նորարարական ձեռնարկատիրության առկա վիճակը տարբեր ցուցանիշների ուսումնասիրության միջոցով: Բացի այդ, նորարարական ներուժի, ինչպես նաև ինստիտուցիոնալ միջավայրի և դրանց զարգացման միտումների միջազգային համեմատական վերլուծության միջոցով քննարկվել են ոլորտի առանձնահատկությունները ՀՀ-ում:

Այսպես, Հայաստանը 1950-ական թվականներից ի վեր գիտատեխնիկական զարգացման մակարդակով և նորարարական հետազոտություններով նախկին Խորհրդային Միության հանրապետությունների մեջ առաջատարների շարքում էր, իսկ միության սահմաններից դուրս մեծ համբավ ուներ: Հայաստանը հատկապես աչքի էր ընկնում տիեզերական հետազոտությունների, հաշվողական և նավիգացիոն սարքավորումների հետ առնչվող ոլորտներում ունեցած ձեռքբերումներով[5]: Մինչդեռ այժմ, ցավոք, չի հանդիսանում նորարարությունով հայտնի երկիր՝ թե՛ աշխարհում, և թե՛ անգամ հետխորհրդային երկրների շարքում[6]:

Դրա մասին նախ վկայում է Հայաստանի տնտեսության բարդության գործակցի միտումը, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով երկրի արտահանման զամբյուղի բազմազանությունն և բարդությունը[7]: Ըստ այս ցուցանիշի, Հայաստանի տնտեսական բարդությունը անկախության տարիների ընթացքում արձանագրել է աշխարհում ամենակտրուկ 10 անկումներից մեկը (29-րդից իջնելով 70-րդ դիրքին)[8]: Այսինքն, տեխնոլոգիաների, ներդրումների և նորարարության պակասով պայմանավորված, տնտեսությունը դարձել է ավելի ու ավելի «պարզ»՝ քիչ ավելացված արժեք ստեղծող:

---

[5] Այսօր աշխարհում հայտնի է «Industrial Internet of thinking» անվանումով

[6] Բոստանջյան Վ., Զախարյան Ա., «Ինովացիոն գործունեության ինստիտուցոնիալ հիմքերը Հայաստանի Հանրապետությունում», Բանբեր ԵՊՏՀ, Երևան, 2020, vol 2020(1), էջ 133

[7] Երկրների դասակարգում, որը հիմնված է նրանց արտահանման զամբյուղի բազմազանության և բարդության վրա
Atlas of Economic Complexity by Harvard's Growth Labs, Economic Complexity Rankings Methodology, հասանելի է՝ https://atlas.cid.harvard.edu/glossary (վերջին մուտքը՝ 19.02.2022թ.)

[8] Տվյալները՝ «Հարվարդի աճի լաբորատորիա», Հասանելի է՝ https://atlas.cid.harvard.edu/rankings (վերջին մուտքը՝ 09.12.2021թ.)

Ցուցանիշի կտրուկ անկումը բացատրենք պարզ օրինակով. համաշխարհային շուկայում՝ այլ երկրների շարքում, Հայաստանում աճեցված ծիրանից պատրաստված տարբեր արտադրանքների, ասենք՝ հյութերի, պահածոյի կամ քացախաթթվի մրցունակությունը դարձել է ավելի ցածր, քան նույն ծիրանի մրցունակությունը՝ որպես հումք, ինչի արդյունքում հայկական հյութերի, պահածոյի կամ քացախաթթվի արտահանումը փոխարինվեց ծիրանի արտահանումով:

Հայաստանում նորարարության ինստիտուցիոնալ անբարենպաստ միջավայրի մասին վկայում է նաև Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության («WIPO») կողմից մշակված Նորարարության համաշխարհային համաթվի վերլուծությունը[9]: Այսպես, ցուցանիշի վերջին տարիների միտումների և համադրելի երկրների հետ համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ մուտքային ցուցանիշների մասով (Ինստիտուտներ, Մարդկային կապիտալին և հետազոտություններին, Ենթակառուցվածքներ, Շուկայական բարդություն, Բիզնեսի հագեցվածության) Հայաստանն ավելի թույլ դիրքերում է գտնվում, քան ելքային արդյունքների գծով (Գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունք, Ստեղծարար արդյունք), կամ այլ կերպ ասած, ցածր մուտքային պայմանների պարագայում Հայաստանը ապահովում է համեմատաբար բարձր արդյունքներ:

Գծապատկեր 1. Նորարարության ենթաինդեքսներով Հայաստանի զբաղեցրած դիրքը 132 երկրների շարքում, 2021թ.[10]



Շարունակելով միտքը կարելի է ասել, որ նորարարության բարելավման համար առավել խոցելի խնդիրները կապվում են միջավայրի բարելավման անհրաժեշտության հետ: Այսինքն, նորարարական ձեռնարկատիրության ցածր մակարդակը պայմանավորված է նախ ինստիտուցիոնալ էկոհամակարգի և ենթակառուցվածքային մի շարք խոցելի խնդիրներով:

[9] World Intellectual Property Organization "Global Innovation Index" database // WIPO (2021) Available at: https://www.wipo.int/global_innovation_index/en/ (վերջին մուտքը՝ 03.12.2021թ.)
[10] Նույն տեղում

Պետք է փաստել, որ Հայաստանում ինստիտուցիոնալ խնդիրների առկայության հանգամանքը ակներև դարձավ հատկապես 2020թ., երբ Կորոնավիրուսային համավարակի և արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով երկիրը կանգնեց լրջագույն խնդիրների առաջ: Այս իրավիճակում ինստիտուցիոնալ խորքային վերլուծության միջոցով պետական և տնտեսական հատվածում առկա խոչընդոտները վեր հանելու և վերանայումներ իրականացնելու բարձր կարևորության մասին արձանագրված է նաև Կառավարության գործունեության 2021-2026թթ. ծրագրում[11]:

Հարկ է ընդգծել նաև, որ ինստիտուցիոնալ խնդիրները խոչնդոտում են նորարարությանը՝ սկսած ձեռնարկության ձևավորման փուլից: «Ձեռնարկությունների համաշխարհային զեկույց, Հայաստան» հետազոտության տվյալների վերլուծության արդյունքները փաստում են, որ Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման փուլում առկա են շատ ավելի բարդ ինստիտուցիոնալ խոչընդոտներ, քան աշխարհի այլ երկրներում: Այդ է վկայում նաև սկսնակ ձեռնարկատիրության ցուցանիշով՝ բարձր (7-րդը 50-ից), և կայացած բիզնես ցուցանիշով՝ միջին դիրքը (23-րդը 50-ից): Դրան զուգահեռ քանակական վերլուծությունը փաստում է, որ Հայաստանում ձեռնարկությունների համար նորարարությունով զբաղվելն ավելի դժվար է, քան աշխարհի այլ երկրներում, ինչի մասին վկայում է նորարարական ձեռնարկատիրության մակարդակի և կայացած ձեռնարկատիրության մակարդակի համադրությունը (23-րդը 50-ից և 32-րդը 50-ից)[12]:

Հատկանշական է, որ նախորդ դարի վերջին, Հայաստանը ինստիտուցիոնալ միջավայրի որակով եղել է առաջատարը, մինչդեռ հարևան համադրելի երկրներից Վրաստանն այսօր ունի ավելի որակյալ ինստիտուցիոնալ պայմաններ, իսկ Ադրբեջանը արձանագրել է կտրուկ բարելավում մի շարք ինստիտուտների որակի առումով, ինչի մասին փաստում է երկրների ինստիտուցիոնալ որակի գնահատման ամենահայտնի և լայնորեն կիրառվող Պետական կառավարման որակի (WGI) ցուցանիշները (Համաշխարհային բանկի կողմից մշակված և հրապարակվող վեց բաղադրիչ տարրեր):

---

[11] ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի օգոստոսի 26-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշման «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 ծրագիր» հավելված, էջ 93, հասանելի է՝ https://www.gov.am/am/gov-program/ (վերջին մուտքը՝ 25.11.2021թ.)

[12] Ամերիա ՓԲԸ, Կառավարման խորհրդատվական ծառայություն, «Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց Հայաստան 2019/2020», Անտարես, Երևան, 2020թ., 184 էջ

Գծապատկեր 2. Ինստիտուցիոնալ որակի ցուցանիշների ամփոփ պատկերը, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան 2021թ.[13]



Հայաստանում, ինչպես Վրաստանի և Ադրբեջանի պարագայում, ինստիտուցիոնալ միջավայրի առավել խոցելի խնդիրներն առկա են նախ և առաջ քաղաքական կայունության և բռնության բացակայության, ինչպես նաև պետական համակարգի հաշվետվողականության և ձայնի իրավունքի դեպքում: Վիճակը հարաբերականորեն բարվոք է իրավական ակտերի որակը բնութագրող ցուցանիշի պարագայում:

Պետք է առանձնացնել նաև, որ Հայաստանում, հատկապես ՏՀՏ ոլորտում, փորձ է կատարվել ինստիտուցիոնալ այս խնդիրը շրջանցել արտերկրում, մասնավորապես ԱՄՆ-ում՝ փոխկապակցված կազմակերպությունների գրանցման միջոցով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս գործընթացը հիմնականում պայմանավորված է ավելի հեշտ ներդրումներ ներգրավելու, շուկաների հետ առավել հեշտ աշխատելու (հատկապես վճարումները ստանալու մասով), ինչպես նաև տեխնոլոգիական ասպարեզում Հայաստանի ցածր հեղինակության հանգամանքով: Այս երևույթը մեծամասամբ պայմանավորված է Հայաստանում նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման համակարգային քայլերի ցածր արդյունավետությունով:

Ատենախոսության երրորդ՝ «**Հայաստանի Հանրապետությունում նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ զարգացման ուղիները**» վերտառությամբ գլխում ներկայացվել են հետազոտության շրջանակներում մշակված պանելային ռեգրեսիոն տնտեսաչափական մի քանի մոդելների հիման վրա ստացված արդյունքները, որոնք թույլ են տվել քանակական չափումների վրա հիմնվելով բացահայտել տարատեսակ պատճառահետևանքային կապեր և հիմնախնդիրների

[13] Համաշխարհային բանկ Պետական կառավարման որակի ցուցանիշներ (WB WGI), հասանելի է՝ https://info.worldbank.org/governance/wgi/ (վերջին մուտքը՝ 21.01.2022թ.)

լուծման ուղիներ: Բացի դրանից ՀՀ նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ վիճակը գնահատելու, առկա հիմնախնդիրներն ու դրանց օպտիմալ լուծման հնարավորությունները համապարփակ կերպով վերլուծելու համար իրականացվել է փորձագիտական հարցում՝ ոլորտի հետ առնչվող փորձագետների շրջանում:

Այսպես, Նորարարական ձեռնարկատիրության վրա ինստիտուտների ազդեցության գնահատման համար գրականության ուսումնասիրության և նախորդ բաժիններում իրականացված վերլուծությունների հիման վրա առաջադրվել է չորս հիպոթեզ և կառուցվել են տնտեսաչափական ռեգրեսիոն մոդելներ՝ դրանք ստուգելու համար:

Առաջադրված հիպոթեզներն են. հիպոթեզ 1՝ «Ինստիտուտները ազդում են նորարարական ձեռնարկատիրության վրա», հիպոթեզ 2՝ «Ինստիտուտների ազդեցությունը ձեռնարկատիրության և նորարարական ձեռնարկատիրության վրա զարգացած և զարգացող երկրներում տարբերվում է», հիպոթեզ 3՝ «Ինստիտուտների և նորարարական ձեռնարկատիրության միջև առկա է փոխադարձ կապ», հիպոթեզ 4՝ «Ոչ ֆորմալ ինստիտուտներն ավելի մեծ ազդեցություն ունեն ձեռնարկատիրության վրա, քան ֆորմալ ինստիտուտները»: Որպես կախյալ փոփոխական ընտրվել են Ձեռնարկատիրության համաշխարհային մոնիտորի կողմից մշակված տվյալները, որոնք ունեն համադրելիության առավել բարձր մակարդակ[14]:

Նորարարական ձեռնարկատիրության վրա ինստիտուտների ազդեցությունը գնահատելու համար ատենախոսության շրջանակներում մշակված հաշվեկշռված պանելային տվյալների շարքերի բազայի վրա («balanced panel dataset»), որը պարունակում է թե՛ որակական, և թե՛ քանակական ցուցանիշներ՝ ձեռնարկատիրության, ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների վերաբերյալ: Տվյալների շտեմարանի և մոդելի կառուցման նախնական փուլում ընտրվել են 130-ից ավելի փոփոխականներ, որոնցից տարբեր թեստերի ընթացքում ընտրվել են շուրջ մեկ տասնյակը:

Հաշվի առնելով, որ նորարարական ձեռնարկատիրության վերաբերյալ տվյալները հասանելի են 2013-2018 թվականների համար՝ պանելային շարքերի մոդելի դիտարկվող ժամանակաշրջան ընտրվել է հենց այդ տարիները՝ 27 երկրների համար:

Պանելային ռեգրեսիոն մոդելներում ներառվել են նաև մի շարք վերահսկող փոփոխականներ («control variables»)՝ ինստիտուտների և ձեռնարկատիրության միջև իրական կապերը հասկանալու և հնարավոր այլընտրանքային բացատրությունները բացառելու համար:

[14] Gemconsortium-ի տվյալների բազա, https://www.gemconsortium.org/data/key-aps (վերջին մուտքը՝ 15.12.2021թ.)

Մոդելների համար ընտրված փոփոխականներն են՝ իշխանությունների հաշվետվողականություն և բնակչության ձայնի իրավունքը, քաղաքական կայունությունը և բռնության բացակայությունը, կառավարության արդյունավետությունը, կարգավորման որակը, իրավունքի գերակայությունը, կոռուպցիայի վերահսկողությունը, GEM ֆորմալ ինստիտուտների որակի ցուցանիշները, անվճարունակությունը լուծելու հեշտությունը, վարկ ստանալը, սեփականության իրավունքները, կառավարության ծախսերը, մեկ շնչի հաշվով եկամուտը, տնտեսական աճի տեմպը, երկրի միջին հեռավորությունը հասարակածից, Ջինի գործակիցը:

Պանելային ռեգրեսիայի վերլուծության համար օգտագործվող մոդելներն ունեն հետևյալ ընդհանուր տեսքը[15]՝

$$Y_{it} = \beta_0 + \beta_1 X_{it} + a_i + \varepsilon_{it} \quad (1)$$

Որտեղ՝

Yit կախված փոփոխականն է (մեր պարագայում՝ Նորարարական ձեռնարկատիրության մակարդակ),

β_0-ը՝ ազատ անդամն է,

X_{it}-ը՝ դիտարկվող անկախ փոփոխականների վեկտորն է,

β_1-ը՝ օգտագործվող յուրաքանչյուր անկախ փոփոխականների գործակիցն է (ինչպես օրինակ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները),

α_i-ը՝ արտահայտում է յուրաքանչյուր երկրի կայուն բնութագիրը,

i-ը՝ ցույց է տալիս հերթական երկիրը (i= ARG, BRA…),

t-ը՝ ցույց է տալիս հերթական տարին (t= 2013, 2014 …),

ε_{it}-ը սխալի մեծությունն է:

Այս մոդելի հիման վրա, սույն հետազոտության շրջանակներում, մեր կողմից առաջադրված հիպոթեզները ստուգելու համար՝ մշակվել են ստորև թվարկված մոդելները:

Մոդել 1-ի հիման վրա կարելի է ստուգել հիպոթեզ 1-ը, ինչպես նաև գնահատել ինստիտուտներից յուրաքանչյուրի ազդեցության մասշտաբը և ուղղությունը (դրական կամ բացասական): Մոդել 1-ի շնորհիվ հնարավոր է նաև ստուգել հիպոթեզ 4-ը:

[15] Albulescu C., "Exploring the role of FDI in enhancing the entrepreneurial activity in Europe: a panel data analysis", International entrepreneurship and management journal, New York, 2015, vol. 12(3), p. 15

Մոդել 1. $Innovative\ TEA_{it} = \beta_0 + \beta_1 VOICE_{it} + \beta_2 POL_{ST_{it}} + \beta_3 + GOV_EF_{it} + \beta_4 REGUL_{it}$
$$\beta_5 LAW_{it} + \beta_6 CORR_{it} + \beta_7 GEM_{NES_{it}} + \beta_8 RESOLV_{it} +$$
$$\beta_8 CREDIT_{it} + \beta_8 PROP_RIGHT_{it} + \beta_8 GOV_SP_{it} + \beta_8 INCOME_{it} + \beta_8 GROWTH_{it} +$$
$$\beta_8 TRPOIC_{it} + \beta_8 GINI_{it} + a_i + \varepsilon_{it} \quad (2)$$

Մոդել 2-ում ստուգելու համար՝ արդյոք հիպոթեզ 2-ը («Ինստիտուտների ազդեցությունը ձեռնարկատիրության և նորարարական ձեռնարկատիրության վրա զարգացած և զարգացող երկրներում տարբերվում է») հաստատվում է, թե մերժվում, ավելացվել է նաև տնտեսության զարգացած լինելու վերաբերյալ տեղեկություն տրամադրող հավելյալ անկախ բինար փոփոխականը:

Մոդել 2. $Innovative\ TEA_{it} = \beta_0 + \beta_1 VOICE_{it} + \beta_2 POL_ST_{it} + \beta_3 GOV_EF_{it} + \beta_4 REGUL_{it} +$
$$\beta_5 LAW_{it} + \beta_6 CORR_{it} + \beta_7 GEM_{NES_{it}} + \beta_8 RESOLV_{it} +$$
$$\beta_8 CREDIT_{it} + \beta_8 PROP_RIGHT_{it} + \beta_8 GOV_SP_{it} + \beta_8 INCOME_{it} + \beta_8 GROWTH_{it} +$$
$$\beta_8 TRPOIC_{it} + \beta_8 GINI_{it} + \boldsymbol{\beta_8 DEVELOPED_{it}} + a_i + \varepsilon_{it} \quad (3)$$

Մոդել 3-ը թույլ է տալիս հաստատել կամ մերժել հիպոթեզ 3-ը («Ինստիտուտների և նորարարական ձեռնարկատիրության միջև առկա է փոխադարձ կապ»):

Մոդել 3. $Institution_{it} = \beta_0 + \beta_1 Innovative\ TEA_{it}$
$$\beta_8 CONTROL_VAR_{it} + a_i + \varepsilon_{it} \quad (4)$$

Պանելային շարքերի մոդելները գնահատելու համար կարող է օգտագործվել երեք մեթոդ: Առաջինը «Pooled OLS» (“Ordinary Least Squares”) մոտեցումն է, որը չի ենթադրում երկրի և ժամանակի հատուկ ազդեցություններ: Այլընտրանքային գնահատման մոտեցում, որն ընդգրկում է երկրի տարասեռությունը, այն «ֆիքսված էֆեկտների» (“Fixed effect”) մոդելն է, որն ընկալում է երկրի հատուկ տարասեռությունը հատման մեջ (այն տարբերվում է երկրից երկիր): Գնահատման երրորդ մեթոդը, որը կիրառվում է պանելային տվյալների վերլուծության համար, «Պատահական էֆեկտների» (“Rendom effect”) մոտեցումն է: Մոդելների մշակման, թեստերի իրականացման և արդյունքների նկարագրության համար կիրառվել են «R» և «Python» ծրագրային փաթեթները:

Աղյուսակ 1. Պանելային համապատասխան մեթոդի ընտրության թեստերի արդյունքները ըստ մոդելների

Մոդել	F-test	Time fixed-effect test	B-P LM test	Hausman test	Եզրակացություն
Մոդել 1	0.02746	0.09819	0.04201	0.00013	Fixed effect method
Մոդել 2	0.02889	0.09817	0.45600	0.04200	Rendom effect method
Մոդել 3	0.6345-0.9988	0.3645-1	0.0002-0.9985	0.7549-0.9927	Pooled OLS

Այսպես, ստացված պանելային ռեգրեսիոն մոդելների արդյունքների հիման վրա հիպոթեզ 1-ը, այն է՝ «Ինստիտուտները ազդում են նորարարական ձեռնարկատիրության վրա», հաստատվում է: Ընդ որում, այդ ազդեցությունը տարբեր ինստիտուտների դեպքում ունի բավական տարբեր ուժգնություն, իսկ որոշների դեպքում ազդեցությունը բացասական է: Ավելի կոնկրետ, դիտարկվածներից նորարարական ձեռնարկատիրության վրա առավել մեծ դրական ազդեցություն ունեցող ինստիտուտներից են՝ կարգավորման որակը (0.2198) և սեփականության իրավունքը (0.1330): Վերջինս ցույց է տալիս հատկապես մտավոր սեփականության պահպանության կարևորությունը նորարարության համար, քանի որ մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ենթադրում է նորարարությունից հատույցի ստանալ՝ այդպիսով իսկ մեծացնելով նորարարությամբ զբաղվելու գրավչությունը: Այլ խոսքով, սեփականության իրավունքը դառնում է նորարարությամբ զբաղվումն բարձր ռիսկին համարժեք հատույց ստանալու գրավականը:

Աղյուսակ 2. Պանելային ռեգրեսիոն մոդելների արդյունքներ (Մոդել 1 և 2)[16]

	Model 1	Model 2
Intercept[1]		19.068358*** (0.0009884)
GOV_EF	-0.234509* (0.030778)	-0.230956* (0.0321137)
REGUL	0.219759** (0.006752)	0.218104** (0.0079204)
GEM_NES	0.132367** (0.006527)	0.126865** (0.0096753)
PROP_RIGHT	0.132979. (0.060586)	0.121464. (0.0657388)
GOV_SP	0.157896** (0.001181)	0.093779. (0.0915712)
CREDIT	-0.163121*** (0.000007951)	-0.111438*** (0.0009089)
GROWTH	0.12038. (0.096414)	0.125495. (0.0695356)
TRPOIC	-0.112065*** (0.00008805)	-0.116816*** (0.00006763)
DEVEOLPED		-1.921024 (0.5799276)
F-test	0.02746	0.02889
DF	127	125
Time fixed effects	YES	YES
B-P LM test	0.04201	0.45600
Hausman test	0.00013	0.04200
R^2	0.51228	0.53875
P-value	< 2.22e-16	< 2.22e-16

Standard errors in parenthesis

Statistical significance: 0 '***' 0.001 '**' 0.01 '*' 0.05 '.' 0.1 ' ' 1

[16] Դիտարկված բոլոր փոփոխականների համար ստուգվել է մոդելում դրանց նշանակալիության մակարդակը, որի արդյունքում փոփոխականներից որոշները դուրս են բերվել մոդելից

Աղյուսակը մշակվել է հեղինակի կողմից հիմվելով տնտեսաչափական մոդելի կիրառման արդյունքների վրա

Հիպոթեզ 2-ը («Ինստիտուտների ազդեցությունը ձեռնարկատիրության և նորարարական ձեռնարկատիրության վրա զարգացած և զարգացող երկրներում տարբերվում է») նույնպես հաստատվում է: Զարգացած և զարգացող երկրներում նորարարական ձեռնարկատիրության վրա ինստիտուտների ազդեցությունը տարբեր է, ըստ այդմ՝ գրականության մեջ առկա զարգացած երկրների վերաբերյալ հետազոտությունների ստացված արդյունքների կիրառումը մյուս երկրների վրա վիճելի է:

Մոդել 3-ի հիման վրա հիպոթեզ 3-ը հաստատվում է կամ, այլ կերպ ասած, ստացված արդյունքներից կարելի է ասել, որ նորարարական ձեռնարկատիրության ազդեցությունն ինստիտուտների վրա առկա է, սակայն այն շատ ավելի թույլ է, քան հակառակ ազդեցությունը:

Աղյուսակ 3. Պանելային ռեգրեսիոն մոդելների արդյունքներ (Մոդել 3)[17]

	R^2	P-value	Estimate
VOICE	0.1361	0.0000	0.8800
POL_ST	0.1259	0.0000	0.8748
GOV_EF	0.1736	0.0000	0.7580
REGUL	0.1700	0.0000	0.8837
CORR	0.0245	0.0000	1.0597
LAW	0.1962	0.0000	1.0119
GEM_NES	0.2771	0.0000	1.2306
RESOLV	0.0186	0.0460	0.2943
PROP_RIGHT	0.2134	0.0000	1.0076
GOV_SP	0.0031	0.4798	-0.1228
CREDIT	0.0065	0.1541	-0.2401

Նորարարական ձեռնարկատիրությունն առավել մեծ ազդեցություն ունի ընդհանուր ձեռնարկատիրական միջավայրի բարելավման վրա, այսինքն, այս յուրահատուկ տիպի ձեռնարկությունները նպաստում են «սովորական» ձեռնարկատիրության զարգացմանը և ընդհանուր էկոհամակարգի բարելավմանը:

Հիպոթեզ 4-ը («Ոչ ֆորմալ ինստիտուտներն ավելի մեծ ազդեցություն ունեն ձեռնարկատիրության վրա, քան ֆորմալ ինստիտուտները») ժխտվում է: Չնայած նրան, որ առավել ոչ ֆորմալ ինստիտուտների ազդեցությունը (անկախ ազդեցության ուղղությունից՝ նշանից) շատ մոտ է ֆորմալ ինստիտուտների ազդեցության, սակայն ընդհանուր առմամբ ֆորմալ ինստիտուտները առավել շատ են ազդում նորարարական ձեռնարկատիրության մակարդակի վրա: Սա իհարկե կարող է բացատրվել նրանով որ երբեմն ոչ ֆորմալ ինստիտուտների ազդեցությունը կարող է արտահայտվել ոչ միայն ուղղակի, այլև ֆորմալ ինստիտուտների միջոցով: Ֆորմալ ինստիտուտների մեծ ազդեցության հնարավորություն կարող է կլիներ առավել հեշտությամբ բարելավել նորարարական ձեռնարկատիրության միջավայրը քանի որ

[17] Աղյուսակը մշակվել է հեղինակի կողմից հիմվելով տնտեսաչափական մոդելի կիրառման արդյունքերի վրա

ինչպես պնդում էր Ուիլյամսոնը, ֆորմալ ինստիտուտները փոխվելու համար պահանջվում է շատ ավելի կարճ ժամանակ, քան ոչ ֆորմալ ինստիտուտների համար[18]:

ՀՀ նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ վիճակը գնահատելու, առկա հիմնախնդիրներն ու դրանց օպտիմալ լուծման հնարավորությունները բացահայտելու համար նպատակահարմար է հաշվի առնել նաև տիրող ընդհանուր միջավայրի վերաբերյալ ոլորտի հետ առնչվող տարբեր խմբերի փորձագետների կարծիքը[19]:

Փորձագիտական հարցումը իրականացվել է երեք հաջորդական փուլով՝

- Փուլ I - Խորքային հարցում («in-depth interview»),
- Փուլ II - Պիլոտային փորձագիտական հարցում (Pilot survey) 30 փորձագետի շրջանում[20],
- Փուլ III – Հիմնական հարցում:

Տվյալների վավերականությունը ստուգելու նպատակով օգտագործվել է Քրոնբախի ալֆա գործակիցը, ինչը հարցման տվյալների դեպքում կազմում է 0.882 և հատում է անհրաժեշտ մակարդակի շեմը՝ 0.7-ը[21]:

Այսպես, հարյուրից ավելի փորձագետների շրջանում իրականացված հետազոտության համաձայն, Հայաստանում այժմ նորարարական ձեռնարկություններին աջակցությանը՝ պետական և հատկապես տեղական կառավարման համակարգերում առաջնահերթություն չի տրվում, մինչդեռ, ինչպես փաստում են փորձագետները, Հայաստանի հնգամյա զարգացման համար այն ունի չափազանց մեծ կարևորություն: Փորձագիտական հետազոտությունը ևս մեկ անգամ հաստատում է այն պնդումը, որ նորարարական ձեռնարկատիրության ցածր մակարդակի հիմնական պատճառներից է պետական աջակցության պակասը. նորարարական ձեռնարկատիրությանն ուղղված պետական աջակցության դիտարկված միջոցառումները գնահատվում են միջինից ցածր:

Բացի դրանից, ըստ փորձագիտական հետազոտության, Հայաստանում ձեռնարկատիրական կրթությունն ունի բարելավման կարիք: Դրա համար շարունակական կրթության գործուն ինստիտուտների ներդրման և զարգացման կարիք կա: Ոլորտում առկա խոցելի խնդիրներից է նաև գիտատեխնիկական մշակումների ստեղծման և դրանց փոխանցման գործուն համակարգի բացակայությունը: Փորձագիտական հետազոտությունը հիմք է տալիս ասելու, որ այս առումով Հայաստանն ունի մի շարք բարեփոխումների կարիք: Հետազոտության արդյունքները նաև փաստում են, որ խնդիրը ոչ միայն գիտատեխնիկական

---

[18] Williamson O., "The New Institutional Economics Take Stock Looking", Journal of Economic Literature, Nashville, 2015, vol. 38(3), p. 597-599

[19] Nancy R. Tague's The Quality Toolbox, Second Edition, ASQ Quality Press, 2004, pages 364–365. Oxford University Press (2017) Definition of hypothesis

[20] Cooper R., Schindler S., "Business Research Methods", McGraw-Hill Education, New York, 2014

[21] Nunally J., "Psychometric Theory", McGraw-Hill, New York, 1948

մշակումների առևտրայնացման, այլև հենց գիտության և տեխնոլոգիաների բազայի հետ է կապված։

Հետազոտության արդյունքների անուղղակի վերլուծության միջոցով բացահայտվել են նաև ձեռնարկատերերի և հասարակական կառույցների միջև հաղորդակցման անարդյունավետ խնդիրները։ Մասնավորապես, առկա են և՛ պետական աջակցման կառույցների, և՛ ձեռնարկությունների քաղաքականության, և՛ պետական ծրագրերի մշակմանը վերաբերող հաղորդակցության արդյունավետության բարելավման հնարավորություններ։ Մյուս կողմից, Հայաստանում առկա է կրթական, գիտական ու հետազոտական կառույցների և ձեռնարկատերերի միջև գիտական մշակումների ու փոխանցումների որոշակի անհամապատասխանություն։

Հիմնվելով ատենախոսության շրջանակներում տարբեր դիտակետերից իրականացված վերլուծության վրա՝ Գլուխ 3-ում մանրամասն նկարագրված են ՀՀ-ում նորարարական ձեռնարկատիրության ինստիտուցիոնալ միջավայրի բարելավման բացահայտված տասը առաջարկություններ և դրանց իրականացման համար գործնական միջոցառումներ։ Դրանց ամփոփ ցանկը ներկայացված է ստորև՝

- արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորում,
- մարդկային կապիտալի որակի բարելավում,
- նորարարության վերաբերյալ վիճակագրության հրապարակում,
- պետական թիրախային աջակցություն,
- նորարարական ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված հայեցակարգային փաստաթղթի մշակում և ընդունում,
- գիտահետազոտական մշակումների փոխանցումների (R&D transfer) տրանսֆերի ինստիտուտի հիմնում,
- ձեռնարկատիրության և նորարարության ընդգրկումը բուհերում,
- կորպորատիվ կառավարում ինստիտուտի կայացում,
- վենչուրային ձեռնարկությունների և հիմնադրամների խթանում,
- նորարարական գոտու (“innovation zone”) հայեցակարգի մշակում և դրա իրագործում։

Ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում նկարագրված են աշխատանքի կատարված քանակական և որակական վերլուծությունների հիմնական եզրահանգումները և դրանցից հետևող առավել առանցքային առաջարկությունները, որոնք ուղղված են թե՛ պետական, թե՛ մասնավոր և թե՛ գիտական հանրությանը։ Դրանցից հիմնականներն են՝

- Ժողովրդագրական հիմնախնդիրների, տնտեսական համակարգային ցնցումների և սահմանափակ ռեսուրսների միջոցով հասարակության կարիքների բավարարման համատեքստում, ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը դարձել է հրամայական տնտեսության

սուբյեկտների որոշումների կայացման և տնտեսության միտումների համար։ Ռեսուրսների սահմանափակ լինելը ստիպում է առկա միջոցներն օգտագործել հնարավորինս արդյունավետ, իսկ դա հնարավոր է դառնում նոր և առավել արգասավոր մոտեցումների բացահայտման՝ նորարարության միջոցով։ Ըստ այդմ, գլոբալացման ներկա պայմաններում նորարարական գործունեությունը կարելի է համարել հասարակությունների կենսամակարդակի բարելավման հիմնական շարժիչ ուժը։

- Նորարարությունը, որը հաճախ մշակվում և մեծամասամբ իրականացվում է ձեռնարկությունների կողմից, անհրաժեշտ է ոչ միայն նոր հնարավորությունների բացահայտման, արտադրողականության ավելացման և զբաղվածության ապահովման համար, այլև նպատակ ունի լուծելու հասարակության առաջ ծառացած ու ծառացող մարտահրավերները, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները (SDG 17 goals) և առողջապահական խնդիրները։ Հայաստանի պարագայում այս խնդիրներին ավելանում են նաև Արցախյան հիմնախնդիրը, աշխարհաքաղաքական անորոշությունը, ինչպես նաև ժողովրդագրական հիմնախնդիրները, որոնց պայմաններում տնտեսության և տնտեսական մեխանիզմների արդյունավետության բարձրացումն առավել քան կարևոր է դառնում։ Թվարկված հիմնախնդիրներից բխող ռիսկերը կանխարգելելու և լուծումներ տալու տեսանկյունից նորարարական ձեռնարկատիրության զարգացման մեխանիզմների խորքային ուսումնասիրության հիման վրա պետության կողմից ոլորտը խթանող քայլերի ձեռնարկումն ունի բարձր կարևորություն։
- Նորարարության զարգացման և դրա միջոցով տնտեսական հավելաճ ապահովելու քայլերի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նորարարությունը խթանող տնտեսական միջավայրի՝ ինստիտուցիոնալ համակարգի առկայությամբ։ Այլ կերպ ասած, եթե տնտեսության մեջ գործող ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներն այնպիսին են, որ ձեռնարկության համար՝ իր նպատակներն իրականացնելու ճանապարհին առավել հեշտ է շրջանցել նորարարությունը, քան դրա միջոցով հասնել նպատակներին, ապա ձեռնարկատերը կշրջանցի նորարարությունը։ Սա բացատրվում է Նորթի կողմից կոչված «խաղի կանոնների»՝ ինստիտուտների կողմից տնտեսական սուբյեկտների համար ստեղծվող գործարքի ծախսերով («transaction costs»), որոնք իրենց հերթին կարող են նպաստել կամ խանգարել ձեռնարկատիրական նորարարությանը։ Ուստի, նորարարական ձեռնարկատիրության միջոցով բարեկեցության և տնտեսական առաջընթացը ապահովելու գրավականը ինստիտուցիոնալ այնպիսի

պայմանների ստեղծումն է, որտեղ ձեռնարկությունները ցանկանան և լինեն նորարար, այդպիսով երկարաժամկետում տնտեսության տարբեր ոլորտներում նպաստելով աշխատանքի արտադրողականության աճին և ավելացված արժեքի մակարդակի բարձրացմանը: Հետազոտության շրջանակներում մշակված պանելային շարքերով տնտեսաչափական մոդելների արդյունքները փաստում են, որ թե ֆորմալ և թե ոչ ֆորմալ ինստիտուտների ազդեցությունը նորարարական ձեռնարկատիրության վրա բավականին բարձր է:

- Նորարարության, ձեռնարկատիրության, ձեռնարկության, կազմակերպության և նորարարական ձեռնարկատիրության միասնական սահմանումը բացակայում է, ըստ այդմ մասնագիտական գրականության համադրության արդյունքում վերլուծվել են դրանց միջև տարբերությունները և սահմանումները:
- Նորարարության համաշխարհային համաթվի միջոցով Հայաստանում նորարարության ինստիտուցիոնալ միջավայրի քանակական տվյալների վերլուծությունը փաստում է, որ մուտքային ցուցանիշների մասով (Ինստիտուտներ, Մարդկային կապիտալին և հետազոտություններին, Ենթակառուցվածքներ, Շուկայական բարդություն, Բիզնեսի հագեցվածության) Հայաստանն ավելի թույլ դիրքերում է գտնվում, քան ելքային արդյունքների գծով (Գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունք, Ստեղծարար արդյունք) կամ, այլ կերպ ասած, ցածր մուտքային պայմանների պարագայում Հայաստանը ապահովում է համեմատաբար բարձր արդյունքներ:
- Հայաստանը նորարարական հետազոտություններով նախկին Խորհրդային Միության հանրապետությունների մեջ առաջատարների շարքում էր մինչդեռ այժմ, ցավոք, չի հանդիսանում նորարարություններով հայտնի երկիր: Հայաստանի տնտեսության բարդության գործակիցը անկախության տարիների ընթացքում արձանագրել է աշխարհում ամենակտրուկ 10 անկումներից մեկը (29-րդից իջնելով 70-րդ դիրքին): Այսինքն, տեխնոլոգիաների, ներդրումների և նորարարության պակասով պայմանավորված, տնտեսությունը դարձել է ավելի ու ավելի «պարզ»՝ քիչ ավելացված արժեք ստեղծող:
- Նախորդ դարի վերջին, Հայաստանը ինստիտուցիոնալ միջավայրի որակով եղել է առաջատարը, մինչդեռ հարևան համադրելի երկրներից Վրաստանն այսօր ունի ավելի որակյալ ինստիտուցիոնալ պայմաններ, իսկ Ադրբեջանը արձանագրել է կտրուկ բարելավում մի շարք ինստիտուտների որակի առումով: Ինստիտուցիոնալ միջավայրի առավել խոցելի խնդիրներն առկա

են նախ և առաջ քաղաքական կայունության և բռնության բացակայության, ինչպես նաև պետական համակարգի հաշվետվողականության և ձայնի իրավունքի դեպքում: Վիճակը հարաբերականորեն բարվոք է իրավական ակտերի որակը բնութագրող ցուցանիշի պարագայում:

- Ինստիտուցիոնալ խնդիրները խոչնդոտում են նորարարությանը՝ սկսած ձեռնարկության ձևավորման փուլից: «Ձեռնարկությունների համաշխարհային զեկույց, Հայաստան» հետազոտության արդյունքները փաստում են, որ Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման փուլում առկա են շատ ավելի բարդ ինստիտուցիոնալ խոչընդոտներ, քան աշխարհի այլ երկրներում: Այդ է վկայում նաև սկսնակ ձեռնարկատիրության ցուցանիշով՝ բարձր (7-րդը 50-ից), և կայացած բիզնես ցուցանիշով՝ միջին դիրքը (23-րդը 50-ից): Դրան զուգահեռ քանակական վերլուծությունը փաստում է, որ Հայաստանում ձեռնարկությունների համար նորարարությունով զբաղվելն ավելի դժվար է, քան աշխարհի այլ երկրներում, ինչի մասին վկայում է նորարարական ձեռնարկատիրության մակարդակի և կայացած ձեռնարկատիրության մակարդակի համադրությունը (23-րդը 50-ից և 32-րդը 50-ից):
- Հետազոտության շրջանակներում մշակված պանելային շարքերով տնտեսաչափական մոդելների արդյունքները փաստում են, որ երկրում նորարարական ձեռնարկատիրության մակարդակի բարելավման հիմնական գործիքներն են պետական կարգավորման որակի բարելավումը սեփականության (այդ թվում՝ մտավոր) իրավունքի պաշտպանությունը և պետության կողմից իրականացվող թիրախային ծախսումները:
- Պետական, կրթության, ձեռնարկատիրության և բիզնեսի աջակցման ոլորտների հարյուրից ավելի փորձագետների շրջանում իրականացված հարցման համաձայն, Հայաստանում այժմ նորարարական ձեռնարկություններին աջակցությանը՝ պետական և հատկապես տեղական կառավարման համակարգերում առաջնահերթություն չի տրվում, մինչդեռ, ինչպես փաստում են փորձագետները, Հայաստանի հնգամյա զարգացման համար այն ունի չափազանց մեծ կարևորություն: Փորձագիտական հետազոտությունը հաստատում է քանակական տվյալների վերլուծությունն այն մասին, որ նորարարական ձեռնարկատիրության ցածր մակարդակի հիմնական պատճառներից է պետական աջակցության պակասը: Բացի դրանից, հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս ձեռնարկատերերի և հասարակական կառույցների (պետական աջակցման կառույցների, քաղաքականություն մշակողների, գիտական և կրթական կառույցների) միջև հաղորդակցման անարդյունավետ խնդիրները:

- Հայաստանում բարձրագույն կրթական և շարունակական կրթության համակարգերում արձանագրվել է ձեռնարկատիրական կրթության թույլ մակարդակ կամ դրա բացակայություն, որը ձեռնարկությունների կայացման խնդիրների և նորարարության ցածր մակարդակի պատճառներից մեկն է:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Թարփոշյան Հ. Վ., «Նորարարական ձեռնարկատիրությունը տնտեսական զարգացման համատեքստում», «Բանբեր ՀՊՏՀ» հանդես, N4(64)/2021, 2021թ, էջեր 140-154, հասանելի է՝ https://asue.am/upload/files/science/banber/2021-year-4/8.pdf
2. Tarposhyan H., "Innovation and innovative entrepreneurship in the Republic of Armenia", Bulletin of High Technology, N4(18)/2021, pp. 43-52, available at: http://bulletin.am/wp-content/uploads/2022/01/2.6..ECONOMICS-1.pdf
3. Թարփոշյան Հ. Վ., «Ձեռնարկատիրական ինստիտուտը Հայաստանում. ձևավորում և առանձնահատկություններ», Գիտական Արցախ հանդես, N4(11) 2021, 2021թ., էջեր 216-230, հասանելի է՝ https://artsakhlib.am/wp-content/plugins/download-attachments/includes/download.php?id=57499
4. Թարփոշյան Հ. Վ., «Ձեռնարկատիրության ինստիտուտ. կարևորությունը և միտումները», «Բանբեր» Եվրասիա միջազգային համալսարան հանդես, № 164Ա (2021-2), 2021թ., էջեր 148-162, հասանելի է՝ https://www.eiu.am/banbyer-yemh-gitakan-handes/
5. Թարփոշյան Հ. Վ., «Ինստիտուտների դերը և դրանց ազդեցությունը ձեռնարկատիրության վրա», «Регион и Мир» հանդես, 2021 N6, 2021թ, էջեր 131-138, հասանելի է՝ http://geopolitika.am/dir/download/696/
6. Թարփոշյան Հ. Վ., «Հայաստանի Հանրապետության ինստիտուցիոնալ միջավայրը և զարգացման միտումները. միջազգային համադրության», Հանրային կառավարում հանդես, 1/2022, 2022թ. (Գտնվում է հրապարակման փուլում)
7. Tarposhyan H., "Assessing the impact of institutions on innovative entrepreneurship. A panel data study", Bulletin of High Technology, N1(19)/2022, pp. 80-91 http://bulletin.am/wp-content/uploads/2022/04/9.pdf
8. Markosyan A., Tarposhyan H., "Innovative entrepreneurship needs assessment in the Republic of Armenia. Expert survey", Bulletin of High Technology, N1(19)/2022 pp. 71-79, http://bulletin.am/wp-content/uploads/2022/04/8.pdf

АКОП ТАРПОШЯН ВАСАКОВИЧ

ВЛИЯНИЕ ИНСТИТУТОВ НА ИННОВАЦИОННОЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВО (НА ПРИМЕРЕ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.02 - «Экономика и управление хозяйством, его сферами».

Публичная защита диссертации состоится 8-го июля 2022 года в 13:30 часов на заседании Специализированного Совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул.Х.Абовяна 52

РЕЗЮМЕ

Вопросы эффективного использования ограниченных ресурсов стали ключевыми для принятия решений хозяйствующими субъектами в условиях демографических проблем и системных потрясений экономики. Ограниченные ресурсы вынуждают максимально эффективно их использовать, а это можно сделать путем разработки новых, более продуктивных подходов, то есть путем инноваций. Соответственно, инновации можно рассматривать как основную движущую силу повышения уровня жизни общества.

Инновации, которые часто разрабатываются и в основном внедряются предприятиями, необходимы не только для выявления новых возможностей, повышения производительности, обеспечения занятости, но также направлены на поиск решений проблем, стоящих перед обществом, таких как вопросы, связанные с устойчивым развитием. В случае Армении арцахский вопрос, геополитическая нестабильность, демографическая ситуация усугубляют указанные проблемы. В результате стало необходимым повышение эффективности экономики и экономических механизмов для обеспечения государственной стабильности и независимости Армении.

В условиях улучшения инновационной среды в стране это одно из основных средств решения этих проблем на системном уровне. По этой причине необходимо углубленное изучение современного состояния и потенциала инновационных предприятий, а также разработка механизмов развития отрасли на основе изучения связей между инновационными предприятиями и учреждениями. Выбор темы

диссертации, объем исследования, а также структура, цели и задачи диссертации обусловлены необходимостью исследования перечисленных вопросов.

Целью диссертации является анализ влияния институтов на инновационное предпринимательство чтобы определить пути улучшения институциональной среды для инновационного предпринимательства в Республике Армения.

Основные теоретико-методические и прикладные результаты, полученные в ходе исследования, проведенного в рамках диссертации, кратко представлены ниже:

- чтобы обеспечить общее понимание применения терминов «инновация», «предпринимательство», «предприятие», «организация» и «инновационное предпринимательство» для различных целей, был использован обзор литературы для анализа этих терминов и разработки их четких определений.
- оценены основы и тенденции развития инновационного предпринимательства в Армении, выявлены наиболее уязвимые проблемы и их причины;
- с помощью панельных регрессионных моделей были проверены четыре предложенные на основе исследования гипотезы, выявляющие влияние институтов на инновационное предпринимательство;
- путем экспертного опроса, проведенного среди специалистов, изучены институциональные проблемы инновационной деятельности и инновационного предпринимательства;
- разработаны десять предложений по улучшению институциональной среды для развития инновационного предпринимательства в Армении.

HAKOB TARPOSHYAN

THE IMPACT OF INSTITUTIONS ON INNOVATIVE ENTREPRENEURSHIP (WITH THE EXAMPLE OF RA)

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.02 “Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place on July 8, 2022 at 13:30 at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address: 0009, Yerevan, 52 Abovyan st.

ABSTRACT

The issue of efficient use of limited resources have become crucial for the decision-making of economic entities in the context of the demographic problems and the systemic shocks of the economy. The limited resources force us to make the most efficient use of them, and this can be done by developing new, more productive approaches, that is, through innovation. Accordingly, innovation can be considered as the main driving force for improving the living standards of society.

Innovation, which is often developed and mostly implemented by enterprises, is necessary not only for identifying new opportunities, increasing productivity, providing employment, but it also aims to find the solutions of the challenges faced by the society such as issues related to sustainable development. In the case of Armenia, the Artsakh issue, the geopolitical instability, the demographic situation, compounds mentioned challenges. As a result, it has become essential to increase the efficiency of the economy and the economic mechanisms to guarantee the state's stability and independence of Armenia.

In the context of the improvement of innovative environment in the country is one of the primary remedies to resolving these problems on a systemic level. For that reason, an in-depth study of the current state and potential of innovative enterprises, as well as the development of industry development mechanisms based on a study of the links between innovative enterprises and institutions is needed. The choice of the topic of the dissertation, the scope of the research, as well as the structure, the goals and the objectives of the dissertation are conditioned by the need to research the enumerated issues.

The purpose of the dissertation is to analyze the impact of institutions on innovative entrepreneurship with the objective of identifying ways of improving the institutional environment for innovative entrepreneurship in the Republic of Armenia.

The main theoretical-methodological and application results obtained during the research conducted within the framework of the dissertation are briefly presented below:

- In order to ensure a common understanding for the application of the terms innovation, entrepreneurship, enterprise, organization, and innovative entrepreneurship for different purposes, a literature review has been conducted to analyse the terms, and provide clear definitions for them;
- the bases and tendencies of the development of innovative entrepreneurship in Armenia were assessed, the most vulnerable problems and their reasons were revealed;
- using panel regression models, the proposed four hypotheses based on the research were tested, revealing the impact of institutions on innovative entrepreneurship;
- through an expert survey conducted among experts, the institutional problems of innovation and innovative entrepreneurship were studied;
- ten proposals for improving the institutional environment for the development of innovative entrepreneurship in Armenia have been developed.